բան էր, երբ քահանաներից մէկը խօսք խնդրելով, ոտի է կանգնում ու գոչում-ինձ հարցնում են, որ առաջարկում ես, ոչ է Բալանթարը։ «Ա՛յ սա է»։ Կարծում սա նոյն իսկ Թեկնածու Բալանթարին անգամ անհաճոյ դրութեան մէջ պէտք է դնէր։

Կային, այո՛ կային շատ բացասական կողմեր։ Հազիւ թէ այդպիսի ընտրութիւն վաւեր համարուի...

Սպասում ենք այլուրջ ծխականների բողոքին և ս. Առաջնորդի ուշադրութեան։

ԱԿԱՆԱՏԵՍ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հայ-Թիւրքական յարաբերութիւնները, չնայելով զանազան խաղաղարար մասնաժողովների ջանքերին, գրեթէ նոյնն է մնում և սպառնում է նորից աւելի մեծ թափով աղմկել Կովկասը։ Վերջին լուրերը Վարանդայից և շրջակայքից յուզիչ են և յուսահատական։ Այս պատճառով Թիֆլիս է եկել Շուշուայ Թեմական առաջնորդ սրբ. Աշոտ եպիսկոպոսը և ներկայանալով երկրիս Փոխարքային խնդրել է նորից Շուշի ուղարկել գեն. Գոլոշչապովին իբրև անկողմնակալ մարդու, ապահովել Եալախ-Շուշի և Շուշի-Գորիս տանող ճանապարհները, ապահովել գիւղացիների դաշտային աշխատանքները, յետ դարձնել Վարանդայի գիւղերից առնուած տուգանքները, հայերից զէնքեր չխլել, ինչպէս որ չեն խլում այնտեղի Թուրքերից, դադարեցնել նորնտեղ կատարուող խուզարկութիւնները, պատժել Վարանդայի սոսկալի դէպքերի յանցագործներին և այլն և այլն։

Փոխարքան խոստացել է բաւարարութիւն տալ սրբազանի բոլոր խնդիրներին և հրամայել գեն. Գոլոշչապովին անմիջապէս ուղևորուել Շուշի։

Չնայելով այս խոստումներին, դրութիւնը այնուամենայնիւ գէթ առ այժմ բարելաւելու յոյս չէ խոստանում. հեռագիրները մէկը միւսի ետևից բերում են աւազակութեանց և աւարառութեան չարագուշակ լուրեր, Աչէնը ռմբակոծուում է, Եալախ-Շուշի ճանապարհին Թուրքերից գերուած և կողոպտուած են բոլոր հայ ընտանիքները, անհանգիստ է ամբողջ Շուշուայ գաւառը։ Բայց մինչև երբ պիտի տանջուեն խեղճ և անզէն հայ բնակիչները, հարցնում ենք կառավարութեան

գործակալներին։ Թող պատասխանեն, որոնց վերաբերում է պատասխան տալ այս հարցին։

—Լրագիրներից տեղեկանում ենք, որ Վ.Հ. Կաթուղիկոսը մի կոնդակ է արձակել, որով հոգևոր պաշտօնատար անձանց ընտրութիւնը յանձնւում է ժողովրդին։ Մանրամասնութիւններ դեռ չկան, ուստի և աւելի մանրամասն մենք կխօսենք այդ մասին յաջորդ համարում։

—Մեզ հաղորդում են, որ Վ.Հ. Հայրապետը յունիսի 10-ին Թիֆլիս կը ժամանէ և ամառը կանցկացնէ Աբասթումանի հանքային ջրերում։

—Մայիսի 10-ին Թիֆլիսում կայացաւ Պետական Դումայի համար մի ներկայացուցիչ ընտրող 80 պատգամաւորի ընտրութիւն՝ քաղաքիս 9 մասերում։ Ընտրութեանը մասնակցում էին քաղաքական զանազան կուսակցութիւններ. 80 հոգուց՝ 71 հոգի ընտրուեցան սոցիալ ռամկավարները, իսկ 9 հոգի (միայն 9-դ քաղաքամասում) ռամկա-սահմանադրականներ։ Ընտրութիւններից առաջ սոցիալ-ռամկավարները պատգամաւորի պաշտօնի համար թեկնածու էին դրել վրացի Նոյ Ժորդանիային, իսկ այժմ, ինչպէս տեղեկանում ենք, մի քանի թեկնածուներ են դրել, որոնց մէջ նաև յայտնի հասարակական գործիչ Արշակ Ս. Բաբեանը, որ ձայների ստուար մեծամասնութեամբ ընտրուած է 8 դ քաղաքամասում որպէս ընտրող պատգամաւոր։

—Առաջիկայ համարում կհրատարակենք մեր աշխատակից պ. Mars-ի մի ընդարձակ տեսութիւն Հայկական հարցի և հայոց յեղափոխական կուսակցութիւնների գործունէութեան վերաբերեալ։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ց. Դասպարեանց. Օժանդակիչ ձեռնարկ մայրենի լեզուի հայերէն ուղիղ կարդալ ուսուցանելու. Թիֆլիս 1906, գ. 7 կ.

Բժ. Ա. Բուդուղեանց. Նուէր հայ դպրոցականին. Ս. Պ. Բ. 1906. գ. 10 կ.

Առաքել Նալբանդեան. Առակներ. գրեալ 1900—4. Թիֆլիս 1906 գ. 50 կ.

Տարեւոր տեղեկագիր հանրական ատենին յանձնանձանաց հայ ազգային հաստատութեանց Բատաւիոյ վասն 1904 ամի. Նոր Ջուղա 1905.

Կանոնագրութիւն Փարիզի հայկական միութեան. Փարիզ 1906 թ.

АРМ. и АБ. Хачатуръ Абовьянъ. Тифлисъ 1906. *գ. 15 կ.*